

Հայտադիմումներ ներկայացնելու հրավեր

«Հայաստանում մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումները ՉԼՄ-ներում»

Դրամաշնորհներ, որոնք կաջակցեն ՉԼՄ-ներում մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումների խթանմանը

Թողարկման ամսաթիվ: նոյեմբերի 9, 2022

Դիմումների վերջնաժամկետն ու լրացման կարգը՝

Freedom House-ի կողմից դիմումների ստացման վերջնաժամկետն է 2022 թ. նոյեմբերի 23-ը, ժամը 23:59 արևելյան ստանդարտ ժամանակով (EST):

Դրամաշնորհի բոլոր հայտերը պետք է էլեկտրոնային եղանակով ներկայացվեն eurasia@freedomhouse.org էլ. հասցեին՝ թեմա դաշտում նշելով «Grant Support to Advance Human Rights-Based Approaches to Media in Armenia»:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՉԿՑՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Freedom House-ը հրավիրում է դրամական աջակցության հայտադիմում ներկայացնելու Հայաստանի Հանրապետությունում գրանցված և գործող քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (ՀԿ) և կոալիցիաներին, որոնք նպատակ ունեն զարգացնել մարդակենտրոն և մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումը լրատվամիջոցների աշխատանքում:

Ապատեղեկատվությունը ոչ միայն խաթարում է երկրի ժողովրդավարական զարգացումը, այլև բացասական ազդեցություն է ունենում մարդու հիմնարար իրավունքների վրա: Մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումը (HRBA) ցանկացած նորության կենտրոնում դնում է մարդկանց բնորոշ բազմազանությունը և նրանց հիմնարար իրավունքները: Freedom House-ը կարծում է, որ HRBA-ն ունի պարադիգմը փոխելու ունակություն, որն ի վիճակի է էապես բարելավել լրատվամիջոցների աշխատանքի որակն ու ազդեցությունը: Տարբեր գործողությունների միջոցով առաջարկվող ծրագրերը պետք է նպատակ ունենան բարձրացնել հայ հասարակության և լրագրողների զգայունությունը ապատեղեկատվության՝ հասարակության տարբեր շերտերի՝ ներառյալ կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցների, մարզինալացված համայնքների, քաղաքացիական հասարակության և այլոց վրա բացասական ազդեցությունների նկատմամբ:

Քաղաքացիների մեծամասնության համար լրատվամիջոցները տեղեկատվության ստացման և տարածման առաջնային աղբյուրն են: Այսպիսով, ՉԼՄ-ներն ունեն մարդու իրավունքներին առնչվող հարցերի վերաբերյալ հանրային կարծիք ձևավորելու հսկայական կարողություն: Այս նախաձեռնությամբ մենք ձգտում ենք նպաստել Հայաստանում բոլորի համար ավելի առողջ տեղեկատվական միջավայրի ստեղծմանը՝ նվազեցնելով բևեռացնող ապատեղեկատվությունը և խտրականությունը:

«Հայաստանում մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումները ՉԼՄ-ներում» կծառայի հետևյալ նպատակներին՝

ա. Խթանել հանրային իրազեկման երկարաժամկետ արշավների և գործողությունների մեկնարկը, որոնք ուշադրություն կհրավիրեն ապատեղեկատվության՝ հանախակի թիրախ հանդիսացող խոցելի և/կամ մարզինալացված խմբերի վրա ազդեցության շուրջ:

բ. Քաղաքացիական հասարակությանն ապահովել անհրաժեշտ տեխնիկական գործիքակազմով և աջակցությամբ՝ մարդու իրավունքների վրա հիմնված ՉԼՄ աշխատանքի ավելի արդյունավետ ջատագովություն իրականացնելու համար,

գ. Աջակցել անկախ ՉԼՄ-ների՝ գեկուցման, մարդու իրավունքների վրա հիմնված ջատագովության արշավների և վերլուծությունների իրականացման ջանքերին՝ քաղաքացիներին ավելի լավ տեղեկացված և վնասակար ազդեցությունների հանդեպ դիմացկուն դարձնելու համար:

դ. Հնարավորություն տալ հայ հասարակությանը տեսնելու ապատեղեկատվության բացասական ազդեցությունը մարդկանց վրա և բարձրացնել կեղծ պատմությունների թիրախների և զոհերի իրավիճակի շուրջ ըմբռնումն ու զգայունությունը:

Freedom House-ը կաջակցի **մեկ տեղական կազմակերպության՝** 6-12 ամիս տևողությամբ ծրագրին՝ դրամաշնորհի շրջանակներում տրամադրելով **մինչև 15.000 ԱՄՆ դոլար** ֆինանսավորում: Հայտադիմումները պետք է ներառեն առաջարկվող գործողությունները, սակայն Freedom House-ը առաջնահերթություն է տալիս կազմակերպության իրավիճակային արձագանքին և ծրագրերի առավելագույն ճկունությանը՝ հաշվի առնելով Հայաստանում տիրող դինամիկ միջավայրը: Հետևաբար, հնարավոր է, որ ծրագրի գործողությունները վերջնական տեսքի բերեն ծրագրի իրականացման ժամկետին ավելի մոտ: Օրինակ՝ առաջարկվող գործողությունները կարող են ներառել լրագրողների զգայունության բարձրացում, մենթորություն, երկխոսության և կոալիցիաների խթանում, ջատագովություն և տեղական, տարածաշրջանային ու ազգային մակարդակներում բազմաֆորմատ մեդիա լուսաբանում:

Նախագծերի առաջարկները կգնահատվեն ընտրող հանձնաժողովի կողմից, որի կազմում կլինեն ներկայացուցիչներ Freedom House-ից և հայաստանյան գործընկեր կազմակերպություններից: Նախագծերի ընտրությունից հետո, Freedom House-ի հայաստանյան թիմը սերտ համագործակցելու է ընտրված դրամաշնորհառուների հետ՝ իրենց նախաձեռնություններն իրականացնելիս:

Առաջնահերթություն կտրվի այն կազմակերպություններին և նախաձեռնություններին, որոնք իրենց դիտարկում են որպես մարդու իրավունքների, հավասարության, ժողովրդավարության և հաշվետվողականության ջատագովներ: Ինչպես նաև, որպես առաջնահերթություն կդիտարկվեն ՀՀ մարզային և համայնքային մակարդակի նախաձեռնություններն ու արշավները: Ծրագրերի դիմումները պետք է ցույց տան կազմակերպության և ջատագովության հիմնական կարիքները և Freedom House-ի աջակցությամբ դրանք լուծելու ցանկությունը:

Հրավերի շրջանակներում դիմումատուներին տրվում է նախագծեր մշակելու լայն հնարավորություն, սակայն հայտադիմումները նաև գնահատվելու են հետևյալ չափանիշներով՝

Արդյոք նախագիծը՝

- Բարձրացնում է իրազեկվածությունը ապատեղեկատվության և մարզինալացված խմբերի վրա դրա ազդեցության մասին,
- Մեդիա աշխատանքում ընդունում է մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցում,
- Խթանում է մարդու իրավունքների վրա հիմնված լրագրությունը,
- Ստեղծում է հասարակության բազմազանության վերաբերյալ փոխըմբռնում:
- Ապահովում է տարբեր սոցիալական և տարիքային խմբերի անհատների մասնակցությունը,
- Ապատեղեկատվության և կեղծ լուրերի ժամանակաշրջանում ամրապնդում է հասարակության վստահությունը անկախ հայկական լրատվամիջոցների նկատմամբ,
- Ներառում է Հայաստանի մարզկենտրոններն ու մարզային համայնքները:

Հաջողված նախագիծը պետք է նաև համապատասխանի հետևյալ չափանիշներին՝

- **Հստակ տեսլական**
Արդյո՞ք դիմումատուին հստակ է արտահայտել իրագեկման, կրթության և վստահության ամրապնդման նպատակը, թիրախային խմբերն ու նախաձեռնության գործիքները:
- **Նորարարություն**
Արդյո՞ք դիմումատուին առաջարկում է նորարարական մոտեցումներ, այդ թվում՝ բովանդակության տարածում, հասարակության ներգրավում, իրագեկում կամ վստահության ձևավորում տեխնոլոգիայի օգտագործման միջոցով՝ ՀՀ-ում ապատեղեկատվության նկատմամբ դիմացկունությունը բարձրացնելու համար:
- **Հասարակության իրագեկում**
Արդյո՞ք դիմումատուին ունի մարզային կամ տեղական ուղղվածություն, ինչպես նաև հստակ պատկերացում իր ներկա և/կամ ցանկալի լսարանի մասին, և թե ինչպես ներգրավել թիրախային լսարանին ու ծառայել նրա կարիքներին:
- **Ներառականություն, խտրականության դեմ պայքար և մարդու իրավունքներ**
Արդյո՞ք դիմումատուին հաշվի է առնում, թե ինչպես են լրատվամիջոցներում պատկերվում քաղաքական, սոցիալական և մշակութային պատկանելիությունն ու ինքնությունը և արդյո՞ք ձևավորել է խտրականության դեմ պայքարի և ներառականության աջակցման ռազմավարություն: Արդյո՞ք նախագիծը ներառում է մարզինապացված համայնքներին և բնակչությանը: Արդյո՞ք նախագիծն արտահայտում է նվիրում ժողովրդավարությանն ու մարդու իրավունքներին և շեշտը դնում դրանց վրա:
- **Կազմակերպչական զարգացվածություն և պատրաստվածություն**
Արդյո՞ք դիմումը հստակ արտահայտում է առաջարկվող նախաձեռնությունն իրականացնելու կարողությունը:

ՈՎՔԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԴԻՄԵԼ

Այս ծրագրին մասնակցելու իրավունք ունեն միայն ոչ առևտրային կազմակերպությունները, ասոցիացիաները, նախաձեռնությունները և հիմնադրամները, որոնք գրանցված են և գործում են Հայաստանի Հանրապետությունում: Անհատներն ու կառավարությունը, քվազիկառավարական կամ առևտրային գործակալություններն ու մարմինները չեն կարող դիմել ֆինանսավորման համար:

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Դրամաշնորհի տրամադրման ընտրությունը կկայացվի մինչև 2022 թ. նոյեմբերի կեսը: Freedom House-ը մտադիր է ֆինանսավորել նախագծերը որոշումների կայացման, և փաստաթղթերի պատրաստման գործընթացի ավարտվելուց հետո: Դրամաշնորհի միջոցների բաշխումը կկատարվի Freedom House-ի և ընտրված կազմակերպությունների միջև պայմանագրի կնքումից հետո:

ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- Հայտադիմումներն ընդունվում են մինչև վերը նշված վերջնաժամկետը,
- Հայտադիմումները պետք է ներկայացվեն էլեկտրոնային եղանակով հայերեն կամ անգլերեն՝ համաձայն տրամադրվող առաջարկվելիք **նախագծի առաջարկի ձևանմուշի (Project proposal template),**
- **Ծրագրի բյուջեն (Budget template)** և **[բյուջեի նշումները \(Budget notes\)](#)** պետք է լրացվեն տրամադրվող ձևաթղթերի մեջ մինչև վերջնաժամկետը,

- Թերի հայտադիմումները **չեն դիտարկվելու**: Յուրաքանչյուր հայտ պետք է ներառի ամբողջովին լրացված հայտադիմումի ձևը, բյուջեն և բյուջեի նշումները:

ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Այս նախաձեռնությունը հանդիսանում է Freedom House-ի ընթացիկ «Հայաստանում ժողովրդավարական մշակույթի խթանումը» ծրագրի մասը: Այս նախագիծը երկխոսության հնարավորություններ է ստեղծում քաղաքացիական հասարակության, կառավարության, քաղաքականություն մշակողների, լրագրողների և հասարակության միջև՝ բացահայտելու ապատեղեկատվության խնդրին անդրադառնալու և Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարությունն ու մարդու իրավունքները պաշտպանելու կառուցողական ուղիներ:

1941 թ. Էլեոնորա Ռուզվելտի և այլոց կողմից հիմնադրված Freedom House-ը Միացյալ Նահանգների շահույթ չհետապնդող, ոչ կառավարական ամենախիստ կազմակերպությունն է՝ նվիրված ժողովրդավարության և ազատության խթանմանն ու պաշտպանությանն ամբողջ աշխարհում: Freedom House-ն աջակցում է գլոբալ մասշտաբով ազատության տարածմանը՝ շահերի պաշտպանության գործունեության, ազատության վիճակի մշտադիտարկման և խորքային հետազոտությունների միջոցով, ինչպես նաև ամբողջ աշխարհում ժողովրդավարական բարեփոխիչներին անմիջական աջակցությամբ: